**Գիտական խորհրդի նիստ   03.12.2018թ.**

1. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ներքին իրավական ակտերի քննարկման և հաստատման մասին:
2. Դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
3. Ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:
4. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. *Հաստատվեցին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ներքին իրավական ակտերը:*
2. Քննարկվեցին դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերը:
3. Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝ դոցենտի գիտական կոչում շնորհվեց հետևյալ անձանց. Աշոտ Յուրիի Սաֆարյանին՝ ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ: Անի Հրաչյայի Աճառյանին՝ ԺԷ.00.00, «Արվեստագիտություն» մասնագիտությամբ: Հաստատվեցին հայցորդների և ասպիրանտների ատենախոսական թեմաները և գիտական ղեկավարները:

**Գիտական խորհրդի նիստ   26.10.2018թ.**

1. Մագիստրատուրայի «Շինարարություն» և «Քաղաքային տնտեսություն» մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայված ուսումնական պլանների հաստատման մասին:
2. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
3. Ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:
4. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. Հաստատվեցին մագիստրատուրայի «Շինարարություն» և «Քաղաքային տնտեսություն» մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայված ուսումնական պլանները:
2. Քննարկվեցին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերը:

3. Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով ՝պրոֆեսորի գիտական կոչում շնորհվեց. Պետրոս Վարդգեսի Համբարձումյանին՝ Ե.23.06 «Շինարարություն» մասնագիտությամբ: Դոցենտի գիտական կոչում շնորհվեց հետևյալ անձանց՝Սուրեն Վլադիմիրի Թովմասյանին՝ Ե.23.06, «Շինարարություն» մասնագիտությամբ, Ավետիք Արտավազդի Արզումանյանին՝ Ե.23.01, «Շինարարություն», Սյուզաննա Յուրիի Ջիլավյանին՝ ԺԸ.00.01, «Ճարտարապետություն» մասնագիտությամբ:
4. Հաստատվեցին հայցորդների և ասպիրանտների ատենախոսական թեմաները և գիտական ղեկավարները:

*Գիտական խորհրդի նիստ 13.07.2018թ.*

1. Համալսարանի 2018-2019 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ մասնագիտությունների մեկ կրեդիտի արժեքը որոշելու մասին:
2. Համալսարանի հաստիքացուցակում անվանափոխություններ կատարելու մասին:
3. Դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
4. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. Հաստատվեցին Համալսարանի 2018-2019 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ մասնագիտությունների մեկ կրեդիտի արժեքը:
2. «Տեխնիկական շահագործման, սպասարկման և պահպանման բաժնի» ու «Գնումների բաժնի» անունները դրանց կողմից իրականացվող գործառույթներին համապատասխանեցնելու նպատակով որոշվեց՝ «Տեխնիկական շահագործման, սպասարկման և պահպանման բաժինը» վերանվանել «Համալսարանի գույքի պահպանման, շահագործման բաժին», «Գնումների բաժինը» վերանվանել «Տնտեսական բաժին»:
3. Քննարկվեցին դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերը:
4. Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով դոցենտի գիտական կոչում շնորհվեց հետևյալ անձանց՝ Արև Հարությունի Սամուելյանին ԺԸ.00.01, «Ճարտարապետություն» մասնագիտությամբ, Հայկ Արարատի Սարգսյանին Ե.23.02, «Շինարարություն» մասնագիտությամբ:

**Գիտական խորհրդի նիստ 14.06.2018թ.**

1. 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:
2. Դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
3. ՀՀ բուհերի 2018-2019 ուստարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով համալսարանին հատկացված տեղերի բաշխումը ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի:
4. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. Ներկայացվեցին և վերլուծվեցին 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքները և ատեստավորող հանձնաժողովների եզրակացությունները:
2. Քննարկվեցին դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերը: Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով. դոցենտի գիտական կոչում շնորհվեց հետևյալ անձանց՝ Արմինե Արծրունու Գևորգյանին Ե.23.03, «Շինարարություն» մասնագիտությամբ, Մարիաննա Պողոսի Հակոբյանին Ե.23.03, «Շինարարություն» մասնագիտությամբ, Վարդգես Պետրոսի Համբարձումյանին Ե.23.04, «Շինարարություն» մասնագիտությամբ,Արթուր Գեորգիի Ավետիսյանին՝ Ե.23.03, «Շինարարություն» մասնագիտությամբ:
3. Ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի հաստատվեցին 2018-2019 ուստարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով համալսարանին հատկացված տեղերի բաշխումը:

**Գիտական խորհրդի նիստ 17.04.2018թ.**

1. Համալսարանի աշխատողների գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակումը «Scopus» և «Web of Science» համակարգերում ընդգրկված ամսագրերում խթանելու մասին:
2. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերի քննարկում և փակ գաղտնի քվեարկության անցկացում:
3. Հայաստանում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ոսկե մեդալով պարգևատրելու մասին:
4. Ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:

5. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. Համալսարանի աշխատողների գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակումը «Scopus» և «Web of Science» համակարգերում ընդգրկված ամսագրերում խթանելու նպատակով սահմանվեց խրախուսման վճարի չափ 2018թ. հունվարի 1-ից հետո հրապարակված և սահմանված պահանջները բավարարող գիտական աշխատությունների հեղինակների համար:
2. Քննարկվեցին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչման հավակնորդների որակավորման գործերը: Կայացավ փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով պրոֆեսորի գիտական կոչում շնորհվեց հետևյալ անձանց՝ Տիգրան Լեոնիդի Դադայանին՝ Ե.23.00, «Շինարարություն» մասնագիտությամբ, Հայկ Երվանդի Այվազյանին՝ ԺԸ.00.01, «Ճարտարապետություն» մասնագիտությամբ, Սարգիս Ռուբիկի Սարդարյանին՝ ԺԸ.00.01, «Ճարտարապետություն» մասնագիտությամբ, դոցենտի գիտական կոչում շնորհվեց հետևյալ անձանց՝ Արշավիր Ալեքսանի Աղեկյանին՝ ԺԸ.00.01, «Ճարտարապետություն» մասնագիտությամբ, Հրաչյա Վոլոդյայի Վարդանյանին՝ ԺԸ.00.01, «Ճարտարապետություն» մասնագիտությամբ:
3. Հայաստանի պատմաճարտարապետական ժառանգության արժևորման և համալսարանի միջազգային կապերի զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար Հայաստանում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասը պարգևատրվեց Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ոսկե մեդալով:
4. Հաստատվեցին հայցորդների և ասպիրանտների ատենախոսական թեմաները և գիտական ղեկավարները:

**Գիտական խորհրդի նիստ 23.02.2018թ.**

1. 2017-2018 ուստարվա քննաշրջանի արդյունքների մասին:
2. Համալսարանի հաստիքացուցակում անվանափոխություններ կատարելու մասին:
3. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ներքին իրավական ակտերի քննարկման և հաստատման մասին:
4. Ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:

5. Համալսարանի շախմատի հավաքականի անդամներին և մարզչին պարգևատրելու մասին:
6. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգային հարցերի որոշումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. Ներկայացվեց և վերլուծվեց 2017-2018 ուստարվա քննաշրջանի արդյունքները (ներառյալ առաջին լուծարքի տվյալները):
2. «Ընդունելությունների» բաժնի անվանումը գործունեությանը համապատասխանեցնելու նպատակով այն վերանվանվեց «Դիմորդների ընդունելության» բաժին:
3. Հաստատվեցին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ներքին իրավական ակտերը:
4. Հաստատվեցին հայցորդների և ասպիրանտների ատենախոսական թեմաները և գիտական ղեկավարները:
5. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ամբիոնի դասախոս, Հայաստանի կանանց շախմատի հավաքականի անդամ, համալսարանի շախմատի հավաքականի գլխավոր մարզիչ, միջազգային գրոսմայստեր Լիլիթ Դավիթի Գալոյանը, Դիզայնի ֆակուլտետի ուսանող, միջազգային վարպետ Սիրանուշ Ռաֆայելի Ղուկասյանը և Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանող, միջազգային վարպետ Նարե Վանիկի Առաքելյանը Հայաստանի կանանց շախմատի բարձրագույն առաջնությունում ինչպես նաև այլ մրցաշարերում մշտապես բարձր արդյունքներ ցուցաբերելու համար պարգևատրվեցին «Ռաֆայել Վահանյան» արծաթե մեդալով: